

Newsletter

Delegation of the European Union to Armenia

April-June 2010 #2



Focus On/խոշոր պլան

Europe Day

Europe Day has become a symbol of the EU together with the flag, the hymn and the single currency. On 9 May 1950 the French Foreign Minister Robert Schuman called to put an end to the long-lasting competition between France and Germany and proposed creating a new European organisation, which would guarantee peace. His idea started turning to reality with the establishment of the European Coal and Steel Community. In 1985 at the Milan Summit of EU Leaders it was decided to celebrate 9 May as Europe Day. This year, Europe Day and the 60th anniversary of what is now known as the Schuman Declaration were commemorated within the EU and beyond. Armenia also celebrated Europe Day through several festive events.

Official events

A Europe Day reception was held on 6 May at the Ministry of Foreign Affairs. Foreign Minister Edward Nalbandyan and the Head of the EU Delegation to Armenia Raul de Lutzenberger noted that this joint event underlines the strengthening of EU- Armenia cooperation. A musical festival held in museums in Vanadzor, Gyumri and Yerevan on 5-14 May was also dedicated to Europe Day.

Europe Day open air

On 22 May Yerevan celebrated Europe Day with an open air concert dedicated to the 60th anniversary of the Schuman Declaration. The concert brought together music of diverse genres uniting people of all generations. The event aimed at informing the youth in particular about Europe Day and the European values. Among the performers were the bands "Katuner", "Bambir", "Empiray" and "Dogma", as well as Sona Shahgeldyan and Arame. Bringing elated atmosphere on Shahumyan square, the concert was followed by a disco party.

Final chord

The series of events dedicated to Europe Day ended with a night of classical music at the Aram Khachaturian concert hall on 4 June. High-ranking representatives of the diplomatic corps, state officials, international organisations, civil society and the general public were present. The Armenian Philharmonic Orchestra performed famous works by European and Armenian composers. In his welcoming speech the Head of the EU Delegation to Armenia informed that the negotiations on the EU-Armenia Association Agreement will be launched in the second part of July.

Եվրոպայի օր

«Եվրոպայի օրը»՝ դրոշի, հիմնի և միասնական տարադրամի հետ միասին դարձել է Եվրոպական միության խորհրդանշաններից մեկը: 1950 թվականի մայիսի 9-ին Ֆրանսիայի արտգործնախարար Ռոբերտ Շումանը կոչ արեց վերջ դնել Ֆրանսիայի և Գերմանիայի միջև երկարատև մրցակցությանը և առաջարկեց ստեղծել Եվրոպայի քաղաքական կազմակերպման մի նոր բանաձև, որը կերաշխավորեր խաղաղություն ամբողջ Եվրոպայում: Նրա գաղափարն իրականություն դարձավ Աժիի ու պողպատի եվրոպական համայնքի հիմնադրումով: 1985 թ.-ին ԵՄ առաջնորդների՝ Միլանում կայացած գագաթնաժողովում որոշում ընդունվեց մայիսի 9-ը նշել որպես «Եվրոպայի օր»: Այս տարի Եվրոպայի օրը և մեզ հայտնի Շումանի հռչակագրի 60-ամյակը նշվեցին ինչպես ԵՄ-ում, այնպես էլ՝ դրա սահմաններից դուրս: Հայաստանում ևս «Եվրոպայի օրը» նշվեց տոնական միջոցառումների շարքով:

Պաշտոնական միջոցառումներ

«Եվրոպայի օրվան» նվիրված ընդունելություն տեղի ունեցավ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում մայիսի 6-ին: Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը և Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դե Լուցենբերգերը նշեցին, որ այս համատեղ միջոցառումն ընդգծում է Հայաստանի և ԵՄ-ի միջև համագործակցության ամրապնդման փաստը: Եվրոպայի օրվան էր նվիրված նաև մայիսի 5-14-ը Վանաձորի, Գյումրիի և Երևանի թանգարաններում տեղի ունեցած երաժշտական փառատոնը:

«Եվրոպայի օրը» բաց երկնքի տակ

Մայիսի 22-ին Երևանում տոնվեց «Եվրոպայի օրը»՝ Շումանի հռչակագրի 60-ամյակին նվիրված բացօթյա համերգով: Համերգի ընթացքում հնչող բազմաժանր երաժշտությունը մեկտեղ էր հավաքել տարբեր սերունդների ներկայացուցիչների: Միջոցառումն ուղղված էր երիտասարդներին «Եվրոպայի օրվա» և ԵՄ արժեքների մասին իրազեկմանը: Կատարողների թվում էին «Կատուներ», «Բամբիր», «Էմփիրայ» և «Դոգմա» խմբերը, ինչպես նաև՝ երգիչներ Սոնա Շահգելդյանը և Արամեն: Համերգին հետևեց դիսկոտեկը՝ աշխույժ մթնոլորտ ու բարձր տրամադրություն ստեղծելով Շահումյանի անվան հրապարակում:

Վերջին ակորդ

«Եվրոպայի օրվան» նվիրված միջոցառումների շարքը եզրափակեց հունիսի 4-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայացած դասական երաժշտության երեկոն: Ներկա էին դիվանագիտական կորպուսի բարձրաստիճան ներկայացուցիչներ և պետական այլեր, միջազգային կազմակերպությունների և հասարակության ներկայացուցիչներ: Հայաստանի Պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը կատարեց Եվրոպական և հայ կոմպոզիտորների հայտնի ստեղծագործություններ: Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Ռ. դե Լուցենբերգերին իր ողջույնի խոսքում տեղեկացրեց, որ այս տարվա հունիսի երկրորդ կեսին կմեկնարկեն ԵՄ-Հայաստան գործակցության համաձայնագրի բանակցությունները:

In this Issue Այս համարում

- Education opportunities in Europe / Կրթության հնարավորություններ Եվրոպայում
- EU institutions: European Parliament / ԵՄ ենթակառուցվածքներ. Եվրախորհրդարան
- Armenian students on Erasmus Mundus / Հայ ուսանողները «Երազմուս մոնդուս»-ում

Info/Ինֆո

The European Commission has re-launched its call for proposals for a € 7 million new regional investment and trade facilitation project **EAST-INVEST Eastern Partnership/SME Facility** (Reference: EuropeAid/129289/C/ACT/Multi). It is open to the countries involved in the Eastern Partnership, namely Ukraine, Belarus, Moldova, Armenia, Azerbaijan and Georgia, and covers the period from 2010 to 2013.

Եվրոպական հանձնաժողովը կրկին հայտարարել է հայտերի ընդունում՝ **7 միլիոն եվրո** արժողությամբ ԻՍ-ԻՆՎԵՍՏ Արևելյան գործընկերության **Աջակցություն փոքր ու միջին ձեռնարկություններին** ներդրումային և առևտրային աջակցման տարածաշրջանային նոր ծրագրի վերաբերյալ (հղում՝ EuropeAid/129289/C/ACT/Multi):

Հայտեր կարող են ներկայացնել Արևելյան գործընկերության մեջ ընդգրկված երկրները՝ Ուկրաինան, Բելառուսը, Մոլդովան, Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը: Ծրագրի տևողությունը՝ 2010 -2013թթ.:

EU High Representative for Foreign Affairs and Security Policy Catherine **Ashton has expressed concern about the loss of momentum in the process of normalisation of Armenian-Turkish relations.** "The EU reiterates its call to both countries to continue their dialogue and remain committed to the process of normalisation without preconditions and in a reasonable timeframe", Ashton said in a statement on 26 April. She expressed hope this would contribute to security, stability and cooperation in the region and confirmed EU support for the process.

Եվրոպական միության Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության (ԱԳԱՔ) բարձրագույն ներկայացուցիչ Կեթրին **Էշթոնը մտահոգություն է հայտնել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում պահը բաց թողնելու կապակցությամբ.** «Եվրամիությունը ևս մեկ անգամ կոչ է անում երկու երկրներին շարունակելու երկխոսությունը և հավատարիմ մնալու կարգավորման գործընթացին՝ առանց նախապայմանների և ողջամիտ ժամկետներում», - հայտարարել է Էշթոնը ապրիլի 26-ին: Նա հույս է հայտնել, որ դա կնպաստի տարածաշրջանում անվտանգության, կայունության և համագործակցության ապահովմանը: ԱԳԱՔ բարձրագույն ներկայացուցիչը հաստատել է ԵՄ-ի՝ այս գործընթացին օժանդակելու պատրաստակամությունը:

Հաղորդագիր

Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում

Ապրիլ-հունիս 2010 #2

Stefan Füle visited Armenia

The EU Commissioner for Enlargement and European Neighborhood Policy visited Armenia on April 6 as part of his first regional visit to the South Caucasus. He expressed hope that the EU will soon start negotiating an Association Agreement with Armenia, which will lead to closer bilateral political and economic relations.

Within the scope of the visit, Armenia and the European Commission signed a memorandum of understanding on the National Indicative Programme 2011-2013. Armenia will be assigned € 157 million as financial support for implementation of the cooperation goals with the EU. Reforms in the areas of democracy, governance, economy and trade are envisaged.

Շտեֆան Բյուլեի այցը Հայաստան

Ապրիլի 6-ին Հարավային Կովկաս կատարած տարածաշրջանային իր առաջին այցով Հայաստան էր ժամանել ԵՄ Ընդլայնման և հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատարը: Նա հույս է հայտնել, որ ԵՄ-ն շուտով կսկսի Հայաստանի հետ բանակցությունները Գործակցության համաձայնագրի շուրջ, ինչը կհանգեցնի քաղաքական և տնտեսական ավելի սերտ երկկողմ հարաբերությունների: Այցի շրջանակներում Հայաստանի և Եվրոպական հանձնաժողովի միջև ստորագրվել է Ազգային ինդիկատիվ ծրագրի վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր 2011-2013 թթ. համար: ԵՄ-ի հետ համագործակցության և նպատակների իրականացման համար Հայաստանին հատկացվելու է 157 մլն եվրո ֆինանսական աջակցություն: Նախատեսվում են բարեփոխումներ ժողովրդավարության, կառավարման, առևտրի և տնտեսության ոլորտներում:



Protection of Intellectual Property in Armenia

The EU Advisory Group held its first workshop on intellectual property rights awareness in Armenia on April 15-16. Experts and researchers presented their observations on falsification and piracy trends in Armenia: the falsification index is particularly high in the fields of technology and software programmes where it reaches 92%, as well as in audiovisual products where it reaches 50%. The underlying reasons are likely related to financial profits and the high consumer demand for such products. Studies show that intellectual property owners often do not engage actively in attempts to protect their copyrights. "Today, the major challenge related to IPR protection in Armenia lies in a problematic implementation and weak enforcement of legislation," said Raul de Luzenberger, Head of the EU Delegation. Better implementation is expected to lead to economic growth and competitiveness on the world market. The two-day workshop was organised by the EU Advisory Group in Armenia, the Ministry of Economy, AEPLAC and the Armenian Chamber of Commerce and Industry.

Մտավոր սեփականության պաշտպանությունը Հայաստանում

Հայաստանում Մտավոր սեփականության իրավունքների իրագրծման ուղղված առաջին աշխատանքային սեմինարն անցկացվեց ապրիլի 15-16-ը: Փորձագետները և հետազոտողները ներկայացրին Հայաստանում իրավունքների կեղծման և խեղաթյուրման վերաբերյալ իրենց ուսումնասիրությունների արդյունքները: Կեղծարարության ցուցանիշները հատկապես բարձր են համակարգչային ծրագրերի ու տեխնիկայի ոլորտում՝ 92% և ձայնատեսողական ապրանքների ոլորտում՝ 50%: Հիմնական պատճառը նմանօրինակ արտադրանքի շահութաբերությունը և դրանց նկատմամբ առկա սպառողական պահանջարկն է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մտավոր սեփականության իրավունքները ակտիվություն չեն ցուցաբերում իրենց իրավունքների պաշտպանության հարցում: «Այսօր Հայաստանում ՄՍ իրավունքների պաշտպանության հիմնական խնդիրն օրենսդրությամբ սահմանված դրույթների թերի կիրառումն է, - ասել է Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուզենբերգերը: Ակնկալվում է, որ օրենքների խստորեն կիրառումը կհանգեցնի միջազգային շուկայում տնտեսական աճի և մրցունակության բարձրացման: Երկրորդ աշխատանքային սեմինարը կազմակերպել էին Հայաստանում Եվրամիության խորհրդատվական խումբը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնը (AEPLAC) և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը:

Struggle against child trafficking

People in the regions are less aware of child trafficking than people in Yerevan, revealed research on child trafficking in Armenia. Poverty and low levels of education may raise the possibility of child trafficking in the country, according to experts who conducted child trafficking research in Armenia. "Children must be armed with skills, which will help them protect themselves," said Mira Antonyan, the President of "Harmonic Society", an Armenian association of social workers. The results of the research, which aimed at studying the level of awareness of child trafficking among the Armenian public, were presented at the EU Delegation to Armenia on 30 March. The programme was implemented by "People in Need" Czech NGO's local partner "Hope and Help" and was funded by the EU.

Պայքար երեխաների թրաֆիկինգի դեմ

Ըստ Հայաստանում երեխաների թրաֆիկինգի (առքուվաճառքի) վերաբերյալ հետազոտության արդյունքների՝ մարդիկ խնդրին մարզերում ավելի քիչ են ծանոթ, քան Երևանում: Հայաստանում երեխաների առքուվաճառքի հետազոտություն անցկացրած փորձագետների կարծիքով՝ աղքատությունը և կրթության ցածր մակարդակը բարձրացնում են երկրում երեխաների թրաֆիկինգի հավանականությունը: «Երեխաներին պետք է օժտել այնպիսի հմտություններով, որոնք կօգնեն պաշտպանելու սեփական անձը», - նշել է «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիայի նախագահ Միրա Անտոնյանը: Թրաֆիկինգի մասին Հայաստանի բնակչության իրազեկվածության մակարդակի ուսումնասիրությանն ուղղված հետազոտության արդյունքները մարտի 30-ին ներկայացվել են Հայաստանում ԵՄ պատվիրակությունում: Ծրագիրը իրականացրել է չեխական «Կարիքավոր մարդիկ» («People in Need») կազմակերպության տեղական գործընկեր «Հույս և օգնություն» ՀԿ-ն՝ ԵՄ ֆինանսավորմամբ:



Training seminars for NGOs

The EU Delegation to Armenia organized 2 training seminars for Armenian NGOs on "Financial Procedures related to EU grant contracts in Armenia" on 30-31 March. The training objective was to provide comprehensive information on financial and accounting matters related to EU grant contracts. Among the training participants were more than 40 financial managers, accountants and project managers representing current and potential beneficiaries of contracts.

Վերապատրաստման դասընթացներ ՀԿ-ների համար

Հայաստանում ԵՄ պատվիրակությունը մարտի 30-31-ը «ԵՄ-ի դրամաշնորհների պայմանագրերին առնչվող ֆինանսական ընթացակարգերը Հայաստանում» թեմայով վերապատրաստման 2 դասընթաց է անցկացրել հանրապետության ՀԿ-ների համար: Դասընթացի նպատակը ԵՄ դրամաշնորհների պայմանագրերին առնչվող ֆինանսական և հաշվապահական հաշվառման հարցերի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն տրամադրելն էր: Դասընթացներին մասնակցել են դրամաշնորհների պայմանագրերի շահառուների ներկայացուցիչներ համարվող ավելի քան 40 ֆինանսական կառավարիչներ, հաշվապահներ և ծրագրերի ղեկավարներ:

EU&Armenia/ԵՄ և Հայաստան

Erasmus Mundus: cooperation in the field of education

The EU considers education important for promoting dialogue and understanding among people and cultures. Erasmus Mundus, a mobility programme in the field of higher education, allows students to enhance their skills abroad. Facilitating the exchange of students with Bachelor's, Master's and Doctorate degrees, Erasmus Mundus improves the quality of higher education through cooperation between Europe and the rest of the world.

- Erasmus Mundus supports:
- Joint programmes at postgraduate level, or the establishment of interinstitutional cooperation partnerships, between universities from Europe and non-EU countries;
 - Scholarships for study, research or teaching periods for individual students, researchers and university staff in the context of joint programmes at postgraduate level or interinstitutional cooperation;
 - Projects aimed at enhancing the attractiveness, profile, visibility and image of European higher education worldwide.

The programme is named after Desiderius Erasmus Rotterdamus, a 15th-century Dutch humanist and theologian

who studied in the best monastic schools throughout Europe. "Mundus" is a Latin word that stands for "world".

Armenian students on Erasmus Mundus

Within the framework of Erasmus Mundus, during the last 3 years over 100 Armenian students left for Europe. For most young people the experience has encouraged change - it influenced not only their perspective on education, but also their personal and professional aspirations. Two students at the Armenian State University of Economics, benefitted from a 10-month training in European universities and share their experience:

20 year-old Hasmik Amiryanyan from Artashat (Ararat Marz) studied at the Alexander Technological Educational Institute of Thessaloniki (Greece) at the Department of Business Administration and Management from 1 January to 31 October 2009.

"I think that the strong point of European education is its practical knowledge and interactive methods of teaching, which promote multifaceted discussions. Here it is the student who is responsible for his education. Those 10 months gave me

more than mere knowledge. I made friends with students from diverse origins and backgrounds, got acquainted with their ideas, tried to see the difference between



views and approaches, putting the values that unite us as a cornerstone," says Hasmik.

Today, Hasmik thinks about continuing her education in Europe. Until then, she plans to help other Armenian students willing to participate in Erasmus Mundus. She is currently assisting the selection committee for the programme at her home university.

25 year-old Gagik Gyulumyan from Pambak (Gegharkuniq Marz) in 2009-2010 held PhD research on Energy Efficiency of Lighting and Reduction of the Lighting Pollution in Public and Residential Areas at Ruse University (Bulgaria).

"Implementation of scientific research in any field needs resources. In this sense, the candidates of the European universities are ensured: they have fully equipped and furnished laboratories at their disposal. The students are free from caring about secondary matters, which allows them to concentrate fully on the task. Except the qualified scientific basis, the programme lets you come into contact with the European civilisation and feel part of the global society", shares Gagik and adds that he is convinced he should continue his scientific activity in Europe.

Find more information at <http://eacea.ec.europa.eu/erasmus-mundus> and www.tempus.am



Education opportunities in Europe Կրթության հնարավորություններ Եվրոպայում

After graduating with a Bachelor's degree in foreign languages, Hasmik Matsakyan kept on dreaming of another profession - tourism. As she didn't find training courses in Armenia that would give her, as she put it, sufficient and thorough knowledge, Hasmik thought of Europe as an alternative. Yet, how to get there? "I lost a whole year before I could continue my education in Europe, because of lack of information," she explained. At the London Metropolitan University Hasmik first had to take six-month preparation courses, and only then entered the International Tourism Management Department, eventually graduating with a Master's degree.

"It is not an easy undertaking for young people from Armenia to find the path leading to European education," says Margarita Pahlevanyan, another Armenian alumnus of a London university. "When I decided to study in Europe, I couldn't find any source of information or people to give me some guidance," she explained. Margarita's passion was also tourism. She started with pre-Master courses at the Frances King School, followed by a Master's degree in Tourism Management at the University of Westminster. The two girls met during their stay in London and decided to assist other young Armenians who want to study in Europe, upon their return.

The idea transformed into reality.

In January 2010 Hasmik and Margarita founded the London Education Opportunities (LEO) agency in Armenia. The latter shares information on leading European educational institutions such as language schools, colleges and universities, gives details on the rules for admission, etc.

The girls currently manage the agency, which cooperates with Education First. A number of young people turned to LEO during the first months of its activity. Some of them came with apprehension that studying according to European standards will be difficult, but Hasmik and Margarita shared their experience to encourage them. The agency also plans to help students with short-term training. This summer, thanks to their help, a group of 10-15 young people will head for a one-month language training in Cambridge or Oxford.



LEO shares information on leading European educational institutions.

LEO-ն տեղեկատվություն է տրամադրում Եվրոպայի առաջատար կրթական համալիրների վերաբերյալ:

Ստանալով օտար լեզուների բակալավրի աստիճան՝ Հասմիկ Մացակյանը շարունակում էր երազել մեկ այլ մասնագիտության՝ զբոսաշրջության մասին: Հայաստանում չգտնելով համապատասխան մագիստրոսական դասընթացներ, որոնք, ըստ նրա, կտային հիմնավոր և բավարար գիտելիքներ, Հասմիկը Եվրոպայում կրթություն ստանալը դիտարկում էր որպես այլընտրանք: Բայց ինչպե՞ս այնտեղ հասնել: «Տեղեկատվության բացակայության պատճառով ես մեկ տարի կորցրի՝ նախքան կրթություն Եվրոպայում շարունակելը»: Նախնական գիտելիքներ ձեռք բերելու համար Հասմիկը նախ՝ վեցամսյա նախաձեռնարկային կուրսեր անցավ Լոնդոն մետրոպոլիտեն (London Metropolitan) համալսարանում, որից հետո միայն ընդունվեց միջազգային տուրիզմի դեկավարման ֆակուլտետ և ստացավ մագիստրոսի աստիճան:

«Դեպի Եվրոպական կրթություն տանող ճանապարհներ գտնելը հայաստանաբնակ երիտասարդների համար հեշտ չէ», - ասում է Մարգարիտա Փահլևանյանը՝ Լոնդոնյան համալսարանի մեկ այլ հայ շրջանավարտ: «Երբ որոշեցի սովորել Եվրոպայում, չգտա տեղեկատվության աղբյուրներ և մարդկանց, ովքեր կօգնեին կողմնորոշվել»: Մարգարիտայի տարերքը նույնպես զբոսաշրջությունն էր: Նա սկսեց «Ֆրեմսիզ» (Frances) բազմակրթական դպրոցի նախաձեռնարկային դասընթացներից, որին հաջորդեց «Վեստմինստեր» (Westminster) համալսարանի զբոսաշրջության դեկավարման ֆակուլտետի մագիստրոսի կոչումը: Լոնդոնում սովորելիս էլ այս երկու աղջիկները ծանոթացել են և որոշել՝ Հայաստան վերադառնալով՝ օգնել Եվրոպայում սովորել ցանկացող հայ երիտասարդներին:

Մրադրությունն իրականություն դարձավ. Հասմիկը և Մարգարիտան 2010թ հունվարին Հայաստանում հիմնադրեցին «Լոնդոնում կրթության հնարավորություններ» գործակալությունը (London Education Opportunities): Վերջինս համապարփակ տեղեկություններ է տրամադրում Եվրոպայի լեզվաբանական թեքումով առաջատար դպրոցների, վարժարանների և համալսարանների վերաբերյալ, մանրամասնում ընդունելության գործընթացը:

Ներկայումս աղջիկները դեկավարում են գործակալությունը, որը համագործակցում է Education First-ի հետ: Գործունեության արդեն իսկ առաջին ամիսներին գործակալություն են դիմել բազմաթիվ երիտասարդներ: Նրանցից ոմանք մտավախություն ունեին՝ կապված Եվրոպական ստանդարտներով սովորելու դժվարությունների հետ, բայց Հասմիկը ու Մարգարիտան մատնանշում են իրենց սեփական փորձը՝ նրանց սատարելու նպատակով: Գործակալությունը նախատեսում է օգնել ուսանողներին նաև կարճաժամկետ դասընթացների հնարավորություններ ստեղծելով: Այս ամառ 10-15 երիտասարդներից բաղկացած խումբ կուղարկվի Քեմբրիջի կամ Օքսֆորդի ամառային դպրոց՝ լեզվի մեկամսյա դասընթացների:

LEO: 80 Vratsyan Str, Yerevan; (+374 10) 572862; (+374 91) 903969; info@leoarmenia.com; www.leoarmenia.com
You can find out more on studying in Europe at http://ec.europa.eu/delegations/armenia/more_info/europe_study/index_en.htm

«Էրազմուս մոնդոլուս» համագործակցություն կրթական ոլորտում

ԵՄ-ն կրթության ոլորտը դիտարկում է որպես ժողովուրդների և նրանց մշակույթների միջև երկխոսության կայացման ու փոխըմբռնման կարևոր գործոն: «Էրազմուս մոնդոլուս» ուսանողներին արտասահմանում կրթություն ստանալու հնարավորություն ընձեռող շարժումնակրթության ծրագիր է բարձրագույն կրթության ոլորտում: «Էրազմուս մոնդոլուս» ենթադրում է բակալավրի, մագիստրոսի աստիճան ունեցող ուսանողների և ասպիրանտների փոխանակում Եվրոպայում և աշխարհում համագործակցության միջոցով:

«Էրազմուս մոնդոլուս» ծրագիրն աջակցում է՝



- հետբուհական համատեղ ծրագրերի իրականացմանը կամ միջամասնարանական համագործակցությանը Եվրոպայի և ԵՄ ոչ անդամ պետությունների համալսարանների միջև,
 - կրթաթոշակների տրամադրմանը անհատ ուսանողներին, հետազոտողներին, դասախոսական կազմին ուսումնառության, հետազոտության կամ դասավանդման ընթացքում՝ հետբուհական կամ միջհամալսարանական համագործակցության համատեղ ծրագրերի համատեքստում:
 - Եվրոպական բարձրագույն կրթության վարկանիշի, սովորողների հեղինակության բարձրացմանը, ինչպես նաև ընդհանուր տեղեկատվության, քափանցիկության ապահովմանն ամբողջ աշխարհում:
 - Ծրագիրն անվանակոչվել է ի պատիվ 15-րդ դարի հայտնի հոլանդացի մարդասեր և կրոնագետ Էրազմուս Ռոտերդամուսի, որն ուսանել է Եվրոպական երկրների լավագույն եկեղեցական սեմինարիաներում: «Mundus» բառը լատիներեն է, որը թարգմանաբար նշանակում է «աշխարհ»:
- Հայ ուսանողները «Էրազմուս մոնդոլուս»-ում**
«Էրազմուս մոնդոլուս» կրթական ծրագրի շրջանակներում վերջին 3 տարվա ընթացքում շուրջ 100 ուսանող է մեկնել Եվրոպա՝ սովորելու: Երիտասարդներից շատերի համար այս ծրագրին մասնակցելը բեկումնային է եղել թե՛ մասնագիտական և թե՛ անձնական ծրագրերի առումով: Երևանի տնտեսագիտական համալսարանի երկու ուսանող 10-ամսյա դասընթացներ են անցել Եվրոպական համալսարաններում և խոսում են իրենց փորձի մասին:
- 20-ամյա Հասմիկ Ամիրջանը՝ Արարատի մարզի Արտաշատ քաղաքից, 2009թ. հունվարի 1-ից հոկտեմբերի 31-ը սովորել է Սալոնիկի «Ալեքսանդր» տեխնոլոգիական կրթության ինստիտուտում (Հունաստան)՝ բիզնեսի կառավարման և մենեջմենտի ֆակուլտետում:
- «Կարծում եմ, որ Եվրոպական կրթության հրապուրիչ կողմը գործնական գիտելիքների տրամադրումը և ինտերակտիվ դասավանդման մեթոդների տիրապետումն է, ինչը արդյունք է բազմակողմանի քննարկումների: Եվրոպայում ուսանողն ինքն է պատասխանատու իր կրթության համար: Այդ 10 ամիսներն ինձ տվեցին ավելին, քան գիտելիքներն են: Ես ընկերացա այլազգի շատ ուսանողների հետ, ծանոթացա նրանց գաղափարներին, փորձեցի հասկանալ հայացքների ու մոտեցումների տարբերությունները՝ հիմքում դնելով այն արժեքները, որոնք կարող են մեզ միավորել», - ասում է Հասմիկը:
- Այսօր Հասմիկը մտածում է իր

կրթությունը Եվրոպայում շարունակելու մասին: Մինչ այդ նա նախատեսում է օգնել այն հայ ուսանողներին, որոնք պատրաստվում են մասնակցել «Էրազմուս մոնդոլուսին»: Ներկայումս Հասմիկը ծրագրի ընտրական հանձնաժողովի անդամ է իր մայր բուհում:

25-ամյա Գագիկ Գյուլումյանը՝ Գեղարքունիքի մարզի Փամբակ գյուղից, 2009-2010 թթ. ասպիրանտական ուսումնասիրություններ է կատարել Ռուսիայի համալսարանում (Քուլդարիա)՝ «Լուսավորության էներգետիկ արդյունավետությունը և աղտոտման կրճատումը հասարակական և բնակելի վայրերում» թեմայով:

«Ցանկացած ոլորտում գիտական ուսումնասիրության համար պայմաններ են անհրաժեշտ: Այս առումով Եվրոպական համալսարաններում ասպիրանտներն ապահովված են. նրանց տրամադրության տակ են համապատասխան կախավորմանը ու սարքավորումներով հագեցած լաբորատորիաները: Ուսանողներն ազատ են կողմնակի խնդիրների մասին մտածելու հոգսից, ինչը հնարավորություն է ընձեռում ամբողջովին կենտրոնանալ հանձնարարությունների վրա: Որակյալ գիտական բազայից բացի ծրագիրը թույլ է տալիս առնչվել Եվրոպական քաղաքակրթության հետ և քեզ զգալ զլրբալ հասարակության մի մաս», - ասում է Գագիկը և ավելացնում, որ ինքը պետք է շարունակի գիտական գործունեությունը Եվրոպայում:

- European Parliament
- European Council
- Council of the EU
- European Commission
- Court of Justice of the EU
- European Central Bank
- Court of Auditors

Եվրախորհրդարան

Չնավորելով Եվրոպական միությունը՝ անդամ-երկրները մասամբ հրաժարվել են իրենց ազգային ինքնիշխանությունից՝ միասնական կառուցվածքով քաղաքական միավորում ստեղծելու նպատակով: Ներկայումս գոյություն ունեն Եվրոպական յոթ պաշտոնական ենթակառուցվածքային միավորումներ, որոնցից յուրաքանչյուրն իր ուրույն դերն ունի ԵՄ-ի գործունեության մեջ: Սույն հաղորդագիրը հերթով համառոտ կներկայացնի ԵՄ ենթակառուցվածքները:

Եվրոպական խորհրդարանը (Եվրախորհրդարան) Եվրոպական միության միակ մարմինն է, որը ձևավորվում է ուղղակի ընտրությունների միջոցով: Այն ներկայումս ունի 736 պատգամավոր, որոնք ընտրվում են մասնակից 27 երկրի կողմից հինգ տարի ժամկետով: Տարիների ընթացքում Եվրոպական խորհրդարանը դարձել է ավելի հզոր: Համաձայն Լիսաբոնյան համաձայնագրի՝ Եվրախորհրդարանն ստեղծվել է որպես համաօրենսդիր մարմին, ունի բյուջե-

տային իշխանություն և իրականացնում է ժողովրդական հսկողություն Եվրոպական բոլոր ենթակառուցվածքների նկատմամբ: Խորհրդարանն օրենսդրական և ԵՄ բյուջեի հետ կապված գործառույթներն իրականացնում է անդամ-պետությունները ներկայացնող ԵՄ խորհրդի հետ համատեղ: Դա նշանակում է, որ գործառույթների մեծ մասը Եվրախորհրդարանը և Եվրոպական խորհուրդը իրականացնում են համատեղ՝ առաջնորդվելով Եվրահանձնաժողովի օրենսդրական առաջարկներով:

Եվրախորհրդարանին է վերապահված Եվրահանձնաժողովի նախագահող նշանակելը, կազմի հաստատումը, ինչպես նաև այն լուծարելու իրավունքը: Եվրախորհրդարանի հերթական անձնամայա նստաշրջանները գումարվում են Ստրասբուրգում (Ֆրանսիա), արտահերթ նստաշրջանները՝ Բրյուսելում (Բելգիա), որտեղ աշխատում են Եվրախորհրդարանի կոմիտեները: Եվրախորհրդարանի քարտուղարության նստավայրը Լյուքսեմբուրգն է:



Լյուքսեմբուրգ

Ֆինանսական աշխարհի փոքրիկ հսկան

Լյուքսեմբուրգը կարող է հպարտանալ Եվրոպայում և աշխարհում բնակչության կենսամակարդակի ամենաբարձր ցուցանիշներով: Չնայած իր փոքր տարածքին՝ այն խոշոր ֆինանսական կենտրոն է, որտեղ ներկայացված են մի շարք միջազգային բանկեր և ֆինանսական կառույցներ: Մայրաքաղաքում են գտնվում շուրջ 1000 ներդրումային հիմնադրամ և ավելի քան 200 բանկ: Այս թվերն առանձնացնում են Լյուքսեմբուրգն աշխարհի ցանկացած այլ երկրից: Լյուքսեմբուրգը նաև Եվրոպական միության հիմնադիր անդամներից է: ԵՄ մի շարք կառույցներ և կազմակերպություններ, այդ թվում՝ Եվրոպական միության դատարանը և Եվրոպական ներդրումային բանկը, գտնվում են Լյուքսեմբուրգում:

Լրիվ անվանումը՝ Լյուքսեմբուրգի Դքսություն:
Մայրաքաղաքը՝ Լյուքսեմբուրգ:
Պետական կառուցվածքը՝ խորհրդարանական ժողովրդավարություն և սահմանադրական դքսություն:
Տարածքը՝ 2, 586 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 500 000 մարդ:
Պետական լեզուները՝ գերմաներեն, ֆրանսերեն և լյուքսեմբուրգերեն:
Կրոնը՝ բնակչության 87%-ը կաթոլիկներ են, 13%-ը՝ այլ հավատքի (այդ թվում՝ բողոքականներ, հրեաներ, մուսուլմաններ):
ԵՄ անդամակցությունը՝ 1957 թ.-ից (հիմնադիր անդամ):

Նիդերլանդները և փայտե կոշիկները

Հողմաղացներ, հեծանիվներ, կակաչներ, ազատասեր բարբեր և համեղ պանիր. առաջին հայացքից անհամարելի թվացող մի խճանկար, որի անունն է Նիդերլանդները:

Այդ գույներ խճանկարում իրենց ուրույն տեղն ունեն ավանդական փայտե կոշիկները՝ կլոմպենները: Դիմակայելով դարերին՝ կլոմպենները Նիդերլանդներում դարձել են հանրահայտ ապրանքանիշ և իրենց ուրույն տեղն ունեն կիրառական արվեստում: Առաջին կլոմպենները պատրաստվել են դեռևս միջնադարում և ազգային տարազի անբաժանելի մասն էին: Այս փայտե կոշիկների վրա արված նախշանկարներով կարելի էր իմանալ, թե այն կրողը ծնունդով որտեղից է:

Պահպանվել և մեր օրերն են հասել կլոմպենների հետ կապված տարբեր ավանդություններ: Օրինակ՝ Մարկեն կղզում փեսացուն կլոմպեններ է պատրաստել իր հարսնացուի համար, որը դրանք կրել է միայն հարսանիքի օրը:

Նախկինում կլոմպեններն ամբողջությամբ ձեռքով էին պատրաստվում, իսկ հիմա արդեն՝ հատուկ մեքենաների միջոցով և միայն վրայի նախշերն են շարունակվում ձեռքով նկարել: Երբեմնի ամենօրյա այս ոտնամանները ներկայումս արտադրվում են հիմնականում որպես էկզոտիկ հուշանվեր, թեև գյուղացիները շարունակում են ժամանակ առ ժամանակ հողամասերում կլոմպեններ կրել:



Լրիվ անվանումը՝ Նիդերլանդների Թագավորություն:
Մայրաքաղաքը՝ Ամստերդամ:
Պետական կառուցվածքը՝ սահմանադրական միապետություն:
Տարածքը՝ 41,500 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 17 մլն մարդ:
Պետական լեզուն՝ հոլանդերեն:
Կրոնը՝ բնակչության 97 %-ը կաթոլիկներ են, կան նաև բողոքականներ և հրեաներ:
ԵՄ անդամակցությունը՝ 1957 թ.-ից (հիմնադիր անդամ):

Ֆրանսիան և ԵՄ-ի արմատները

1950 թ.-ի մայիսի 9-ին Ֆրանսիայի արտգործնախարար Ռոբերտ Շումանը հրապարակեց մի հռչակագիր, որում առաջին անգամ բարձրաձայնվեց նոր Եվրոպայի կառուցման գաղափարը: Այսօր այդ տարեթիվը նշանավորվում է որպես Եվրոպական գաղափարի սկիզբ: Գաղափարը կյանքի կոչվեց նախ՝ տնտեսական ներգրավվածությամբ: Անկասկած, Ֆրանսիան դրանից օգուտ քաղեց: Այսօր Ֆրանսիան միջազգային տնտեսական թատերաբեմի գլխավոր դերակատարներից է: Գտնվելով Եվրոպայի կենտրոնում և ելք ունենալով դեպի Արևմտյան Եվրոպայի գլխավոր ծովային առևտրային մայրուղիները (Միջերկրական ծով, Լա Մանշ, Ատլանտյան օվկիանոս)՝ Ֆրանսիան արտոնյալ աշխարհագրական դիրքում է: Ֆրանսիական տնտեսության զարգացմանը նպաստել է նաև 1957թ. ձևավորված ընդհանուր Եվրոպական շուկան, ինչը մեծ հնարավորություններ է ընձեռել Ֆրանսիական ձեռնարկությունների համար: Ապրանքների ու կապիտալի ազատ շրջանառությունը մեծացրել է ներդրումների ծավալը երկրում և Ֆրանսիական ձեռնարկատերերին հնարավորություն տվել դուրս գալու միջազգային առևտրի ասպարեզ: Իսկ տեղաշարժման ազատությունը Ֆրանսիային դարձրել է աշխարհում զբոսաշրջության անվիճելի առաջատար: Այսօր Ֆրանսիան աշխարհի ամենաշատ օտարերկրյա այցելուներ ունեցող երկիրն է, իսկ էյֆելյան աշտարակը՝ ամենաշատ այցելվող վայրը:



Լրիվ անվանումը՝ Ֆրանսիայի Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Փարիզ:
Պետական կառուցվածքը՝ նախագահական հանրապետություն:
Տարածքը՝ 674,843 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 65,5 մլն մարդ:
Պետական լեզուն՝ ֆրանսերեն:
Կրոնը՝ բնակչության 51 %-ը կաթոլիկներ են, 31 %-ը՝ աթեիստներ, կան նաև մուսուլմաններ, բողոքականներ, բուդդայականներ:
ԵՄ անդամակցությունը՝ 1957 թ.-ից (հիմնադիր անդամ):

- ԺՄԻԵՆ՝ ժողովրդավարության և մարդու իրավունքների Եվրոպական նախաձեռնություն, որը մեկնարկել է 2006 թվականին, փոխարինել է նախկինում գործող Եվրոպական նախաձեռնությանը (2000-2006թթ.)՝ հավատարիմ մնալով վերջինիս սկզբունքներին: Այն ուղղված է ԵՄ-ին չանդամագրված երկրներում ժողովրդավարության ու մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանը:
- Լիսաբոնյան համաձայնագիրը ստորագրել են ԵՄ 27 անդամ երկրների նախագահները 2007 թ.-ի դեկտեմբերի 11-ին: Այն ուժի մեջ է մտել 2009թ.-ի դեկտեմբերի 1-ից: Համաձայնագրի նպատակն է 2004 թ.-ից ԵՄ-ի ընդարձակման երկու խոշոր ավիքներից հետո, երբ ԵՄ անդամ-պետությունների թիվը 15-ից հասավ 27-ի, լուրջ բարեփոխումներ իրականացնել ԵՄ-ի գործունեության մեջ: Լիսաբոնյան համաձայնագիրը ստեղծվել է Սահմանադրական համաձայնագրի փոխարեն, որը 2005 թ.-ին Ֆրանսիայի և Նիդերլանդների ընտրողները մերժել էին:

For more information please contact the Delegation of the European Union to Armenia
 21 Frik str, Yerevan, Armenia Entrance from Proshyan str.
 Tel.: (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95; E-mail: Delegation-Armenia@ec.europa.eu; http://ec.europa.eu/delegations/armenia
 The Newsletter prepared by SHARM Holding

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Եվրոպական միության պատվիրակությանը Հայաստանում
 Հայաստան, Երևան, Ֆրիկի փողոց 21, (մուտքը՝ Պոռչյան փողոցից)
 Հեռ.՝ (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95, էլ. փոստ՝ Delegation-Armenia@ec.europa.eu, http://ec.europa.eu/delegations/armenia
 Հաղորդագիրը պատրաստել է ՇԱՐՄ Հոլդինգը